ԱՂԱ-ՄԱՀՄԵԴ ԽԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ֆ. Ե. ՄԱՅԻԼՅԱՆ

1796 թ. Աղա-Մահմեդ խանի զորքերը խուճապահար փախուստի դիմեցին Անդրկովկասից, ուր լիիրավ տնօրինություն էր հաստատել գեներալ Վ. Զուբովի Կասպիական կորպուսը։ Վերադառնալով հայրենիք, Աղա-Մահմեդ խանը հուսակվեց Իրանի շահ։ Դա այլևս հանուն սրա «բացառիկ հաջողությունների, որ ունեցավ ռուսական զորքերի ջախջախման գործում», թեև Անդրկովկասում այդպես էլ չբախվեց ռուսների հետ։

Սակայն, շուտով Աղա-Մահմեդ խանին տեղեկություններ հասան գեներալ Վ. Զուբովի Կասպիական կորպուսի Ռուսաստան վերադառնալու մասին։ Շահը որոշեց անհապաղ օգտվել ստեղծված իրավիճակից և դարձյալ արշավել Անդրկովկաս։ Աղա-Մահմեդ խանի զորքերի հիմնական մասը Արաքսն անցնելուց հետո ուղարկվեց Շուշիի գրավման և Իբրահիմ-Խալիլ խանի որոնումների համար։ Սակայն Ղարաբաղի բռնատերը, լսելով իրանական զորքերի Շուշուն մոտենալու մասին, փախել էր Դաղստան և ապաստանել իր աներոջ՝ Ումմայի-խան Ավարացու մոտ։

Իբրահիմ-Խալիլ խանի Շուշիից փախուստի դիմելու պատճառները կեղծվել են ազերական ժամանակակից պատմագիտության մեջ։ Այսպես օրինակ, Հաջի Մուրատ Իբրահիմբեյլին փորձում է ապացուցել, թե իբր «Իբրահիմ-Խալիլ խանը Դաղստան փախչելով միայն հաստատեց անձնական նվիրվածությունը Ռուսաստանին»[1], և դա հիմնավորում է նրանով, որ Իբրահիմ խանը «թեև հեռացել է Շուշիից և ապաստանել Ջարի մարզում (Բալաքանում), «սակայն Իրանի կողմից հանդես չի եկել»[2]։

Իրականում Իբրահիմ-Խալիլ խանը Ռուսաստանին իր հավատարմությունը չի ապացուցել, քանզի այդպիսին երբեք էլ չի ունեցել։ Դրա փոխարեն Իբրահիմ խանը բավականաչափ հստակորեն է ցուցաբերել դեպի Ռուսաստանը տածած իր ատելությունը դեռ 1796 թ., երբ գեներալ Ա. Ռիմսկի-Կորսակովի՝ այն ժամանակ Գանձակում կենտրոնացված բրիգադի կողմից Ղարաբաղը Ռուսաստանին միացնելու գործողությունները կանխելու նպատակով գլխավորել է գեներալ Վ. Զուբովի դեմ ուղղված դավադրությունը[3]։ Իբրահիմ-Խալիլ խանը անգամ պատրաստ էր իր գեղեցկուհի դստերը կնության տալ առաջադրանքը կատարած Մորթեզա-Ղուլի խանին (Աղա-Մահմեդ խանի եղբորը)[4]։ Իբրահիմ խանի՝ Ռուսաստանի նկատմամբ տածած ատելության ապացույցն է նաև Ղարաբաղի Մելիք Աբովի բանտարկությունը[5], որի պատճառը հայ մելիքի կապն էր Ռուսաստանի հետ։

Իրանական զորքերի Շուշիին մոտենալու պահին Ղարաբաղից Իբրահիմ խանի փախստյան իրողությունը կեղծում է նաև ազերական մի այլ պատմաբան՝ Արիֆ Բաբաևը։ Համաձայն նրա մեկնակերպի, Իբրահիմ-Խալիլ

---

[1] Хаджи Мурат Ибрагимбейли, Россия и Азербайджан в первой трети XIX века, М., 1969, с. 56.

[2] *Նույն տեղում։*

[3] *Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 398։*

[4] В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. I, вып. I, СПб., 1887, с. 291.

[5] А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1990, с. 178.

խանն իր «Շուշու պաշարված բերդից արտաքրոհի էր դիմել բերդը հրետանի կոծող իրանական հրետանին ոչնչացնելու նպատակով, սակայն Ղաջարները փակել էին բերդ տանող բոլոր ճանապարհները», և այդ խիզ պատճառով «Իբրահիմ խանը ստիպված ուղևորվեց Դաղստան՝ իր ազգական Ումմայի-խան Ավարացու մոտ»[8]։ Միանգամայն պարզ է, որ Իբրահիմ-Խալիլ խանը, իհարկե, չէր կարող և չէր ուզում ճնշել թշնամու հրետանու կրակը և, որ կարևորն է, նպատակ չուներ վերադառնալու Շուշու բերդ։ Դա է հաստատում XIX դ. առերի պատմիչ Ահմեդ-բեկ Ջավանշիրը, մասնավորապես նշելով, թե Ղարաբաղի փոխանորդ Իբրահիմ-Խալիլ խանն իր կնոջ մոտ Դաղստան ուղևորվեց ավելի վաղ, երբ Աղա-Մահմեդ խանի զորքերը նոր էին մոտենում Շուշիին[7], այլ ոչ թե բերդի պաշարման ժամանակ, ինչպես խեղաթյուրում է Արիֆ Բաբաևը։

Ղարաբաղի Իբրահիմ խանի դիմակայությունն Իրանին և Թուրքիային հետ լարված հարաբերությունները, նրան հատկապես Թուրքիայի նկատմամբ կայուն կողմնորոշման, ինչն ապացուցում են ֆելդմարշալ Ս. Ռումյանցևի հայտնաբերած «գաղտնի փաստաթղթերը՝ ուղղված Իբրահիմ-Խալիլ Խանի ձեռքով»[9]։

Ղարաբաղի խանի գործունեության նկատմամբ ցարիզմի «հանդուրժողական» վերաբերմունքը արդարացի զայրույթ առաջացրեց ռուսամետ տրամադրությունների [illegible] Հայերի մեջ։ Այդ վայրույթը հատկապես ուժեղացավ այն բանից հետո, երբ 1783 թ. ապրիլի 6-ին գեներալ Դ. Գուդովիչը ստորագրեց մի հրաման, ըստ որի «Շուշու Իբրահիմ խանին հարկ է տարվել, քանզի այսուհետև Ղարաբաղը պետք է կազմի հայկական անկախ մարզ»[10]։ Սակայն այդ նույն թվականին Գեորգիևսկի դաշնագիրը կնքելու ասելով Գուդովիչը բեկանեց ապրիլի 6-ին իր կողմից հաստատված հրամանը[11] և Ղարաբաղի խանին ընծաներ ուղարկելով հիշեցրեց, որ Վրաստանն անցել է Ռուսաստանի հովանավորության ներքո, ընդսմին հարցում անելով, թե արդյո՞ք Իբրահիմը չի ուզում հետևել Հերակլի օրինակին։ Այդ հարցմանն ի պատասխան Իբրահիմը գրեց, թե «կրնդունի ռուսական հպատակություն, սին հայ մելիքությունները մնան իր իշխանության տակ»։

Ի. շնորհատի նման զիջանողականությունից զարմացած Եկատերինա II-ին Դ. Գուդովիչը բացատրեց, որ Իբրահիմ-Խալիլ խանին կարիք չկա անհանգստացնելու, որովհետև նա դեռ պետք է Ֆաթալի խան Ղուբացու դեմ պայքարելու համար (Իբրահիմ խանն Արևելյան Անդրկովկասի խանությունների գաղտնադրության պարտությունից Ֆաթալի խանի ոխերիմ հակառակորդն էր)[12]։

Ինչպես պատմում է Բաֆֆին, «այդ ժամանակ հայոց մելիքները նույնպես մեծ երկյուղի մեջ ընկան։ Նրանք դեռ Աղա-Մահմեդ խանի առաջին արշավանքի ժամանակ մերժել էին շահի հրավերքը, որով կոչում էր նրանց ընդունել Պարսկաստանի հովանավորությունը՝ խոստանալով ոչնչացնել Իբրահիմ խանին և վերահաստատել Ղարաբաղում մելիքների վաղեմի իշխանությունը։ Բայց մելիքները այնքան անխոհեմ գտնվեցան, որ բռնեցին Իբրահիմ խանի կողմը, և... սկսեցին իրենց բոլոր ուժերով պաշտպանել նրան

---

[8] Ариф Гафароглы Бабаев, Борьба против иранской агрессии, турецких происков и усиление русской ориентации в Азербайджане (автореф. канд. дисс.), Баку, 1984, с. 19.

[7] Ахмедбек Джаваншир, История Карабахского ханства (с 1747 по 1805 год), Баку, 1961, с. 78.

[8] А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 107։

[9] ЦГВИА, ф. 52, д. 90, л. 8.

[10] А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 75։

[11] О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966, с. 183.

[12] А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 76։

և Շուշիի բերդը շահի ահագին զորության դեմ։ Իսկ այժմ ի՞նչ պիտի անեին, երբ նույն շահը ավելի մեծ պատրաստությամբ հարձակվեցավ Ղարաբաղի վրա։

Նշենք միայն, որ հայերը Աղա-Մահմեդ խանի այդ պահանջը չկատարեցին՝ շանկականալով հակամարտության մեջ մտնելու զինված մահմեդական ամբողջ դաշնադրության հետ, և հայրենի հայկական հողը պաշտպանում էին անկախ այն բանից, որ Ղարաբաղի խանությունը գլխավորում էր բռնատիրությունը։

Այնուհետև գրողը շարունակում է. «Մելիք-Ջումշուդն անձամբ առաջնորդեց նրան (Աղա-Մահմեդին—Ֆ. Մ.), տարավ Շուշի բերդը, որը առանց ընդդիմության իր դռները բաց արեց ներքինի Թագավորի առջև։ Հայոց հողիորականությունը հանդեսով դուրս եկավ նրա առջևը և տարավ Իբրահիմ-խանի պալատը...

...Աղա-Մահմեդ-խանը մնաց Շուշի բերդում 25 օր։ Այդ ժամանակ կամեցավ նա պատժել այն բոլոր հայ և Թուրք ավագներին, որոնք իրան ընդդիմություն էին գործել Շուշի բերդի առաջին պաշարման ժամանակ և որոնք Իբրահիմ-խանի կուսակիցներն էին։ Դրանց թվում էին՝ Մելիք-Ռուստամը, Մելիք-Միրզախանյանը, Մելիք-Ալլահվերդին և մի քանի հայ հոգևորականներ, յուզբաշիներ և տանուտերներ։ Դրանց թվում էին Իբրահիմ-խանի եղբոր որդի Մահմադ-բեկը և մի քանի ուրիշ բեկեր։ Ամենքն էլ բանտարկված էին»[14]։ Երբ շահի պատանի սենեկապետ, Նրա սիրելի Սաֆար-Ալի բեկը խընդրեց շահին աղատել դատապարտյալներին, գոնե Հայերին, դա «սաստիկ բորբոքեց շահի բարկությունը և նա ասաց հետևյալ խոսքերը. «կարմիր արյունով ցողելով «սև այգին» (Ղարա-բաղ Թուրքերեն նշանակում է սև այգի), ես նրան վարդի գույն պիտի տամ... առավոտյան այն բոլոր դավաճանների դլուխներից հրապարակի վրա մի աշտարակ պիտի կազմել տամ...»[15]։

Հայ պատմիչ Հակոբ Շուշեցին իր «Պատմութիւն գաւառին Արցախայ» աշխատության մեջ նկարագրում է Աղա-Մահմեդ խանի սպանությունը։ Վերջինս անձամբ կտրում է Սաֆար-Ալիի երկու ականջը, վերքերի վրա աղ դանում և սպառնում, որ հաջորդ օրը կսպանի նրան։ Սաֆար-Ալին կորցնելու ոչինչ չունենալով, գիշերով մտնում է խանի ննջասենյակը և երկսայրի սրով սպանում է նրան։ Լուսադեմին մտնելով Երից մանկանց հայոց եկեղեցին, նա հայտնում է, որ սպանել է շահին[16]։

Իսկ առավոտյան ամբողջ բերդով մեկ տարածվում է Աղա-Մահմեդ շահի սպանության լուրը։

Աղա-Մահմեդ շահը պատմության մեջ մտավ որպես դաժան, արյունարբու տիրակալ։ «Դեպի գահ անցած նրա ճանապարհն ուղենշված էր դիակների բուրգերով, համատարած քնաջնջումով, կուրացածների դանդվածներով»—նշում է Պ. Էվերին[17]։

Աղա-Մահմեդ շահի սպանության մասին դոյություն ունեն տարբեր վարկածներ. դրանցից ամենաուշագրավը պատկանում է Բաֆֆուն։ Ըստ հայ մեծ գրողի՝ արյունախում բռնապետ Աղա-Մահմեդ շահի սպանությունը Շուշիում կազմակերպել էին հայերը, որոնց առաջնորդն էր շահի պալատական, ծառումով հայ, վերը հիշատակված Սաֆար-Ալի բեկը, որը մինչ այդ Ղարաբաղ գալիս, բայց ապարդյուն շահին առնչվել էր ոչ թե հայերին[18]։ Ն. Կուզնեցովայի վարկածի համաձայն, Աղա-Մահմեդ շահի սպանությունը նախապատրաստել էին Մղխերի վրացիները, որոնք դրանով վրեժխնդիր էին լինում

---

13 Բաֆֆի, երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 271։

14 Նույն տեղում, էջ 272—273։

15 Նույն տեղում, էջ 273։

16 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2734, էջ 18։

17 Н. А. Кузнецова, Иран в первой половине XIX века, М., 1983, с. 237.

18 Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 273։

Աղա-Մահմեդի զորքերի կողմից 1795 թ. Թիֆլիսի հրդեհման համար[19]։ Ա. Միլլերի մեկնակերպի համաձայն, Աղա-Մահմեդ շահին սպանել են նրա երեք ծառաները, որոնք գործում էին Սադեհ-խան Կաշկայացու դրդումով։ Նա այդ սպանությունից հետո Թավրիզում իրեն հռչակեց Իրանի շահ, սակայն գահ բարձրացավ Աղա-Մահմեդի ազգական Ֆաթ-Ալին[20]։ Ծառաների կողմից Աղա-Մահմեդ շահի սպանության վարկածն է առաջ քաշում նաև ժամանակակից ֆրանսիական հեղինակ Ա. Դյուպրենը[21]։

Անդրկովկասում գերիշխելու համար ռուս-պարսկական մրցակցությունը շարունակվեց XIX դ. սկզբի ռուս-պարսկական պատերազմներում և ավարտվեց Անդրկովկասը Ռուսաստանին միացվելով։

К ВОПРОСУ ОБ УБИЙСТВЕ АГА-МОХАММЕД ХАНА

Ф. Е. МАИЛЯН

Резюме

Второе нашествие Ага-Мохамедд хана в Закавказье в 1797 г. имело место после того, как Каспийский корпус генерала В. Зубова был отозван в Россию Павлом I. К этому времени глава мусульманской коалиции Ибрагим-Халил хан бежал в Дагестан, а Ага-Мохаммед хан пытался восстановить господство Ирана в Закавказье. Однако он был убит в Шуше заговорщиками. Борьба за господство в Закавказье продолжалась в двух русско-иранских войнах в начале XIX в. и завершилась присоединением Закавказья к России.

---

19 Н. А. Кузнецова, Նշվ. աշխ., էջ 21։

20 А. Ф. Миллер, Мустафа-паша Байрактар, М., 1949, с. 363—365.

21 Մ. Ղուլալյան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII—XVIII դարեր, գիրք Ա, աշխարհական պատմություն, Երևան, 1990, էջ 246։